Հայ գրականություն, Հուշագրություն
13+

# Շիրվանզադե
# Մի հանդիպում

Անցել է մոտ քսան տարի այն օրից: Ճիշտ թվականը չեմ հիշում:

Ղազարոս Աղայանցի քառասնամյա գրական գործունեության հոբելյանն էր: Իսկապես դա հոբելյան չէր, այլ մի պարզ ընկերական հացկերույթ: Բռնակալ իշխան Գոլիցինի բռունցքն այդ ժամանակ իր գերագույն ուժի մեջ էր, և ամեն մի հայ հասարակական տոնախմբություն արգելված էր: Սակայն ոստիկանապետը «բարի» էր եղել թույլ տալու մի հացկերույթով պատվելու ծերունի Աղայանցին:

— Պայմանով, որ հացկերույթի ժամանակ ոչ մի քաղաքական բովանդակությամբ խոսք չարտասանվի — ասաց նա ինձ, որ գնացել էի այդ թույլտվությունը ստանալու:

— Երաշխավորում եմ, որ չի արտասանվի, բոլոր ճառերը կունենան գրական բովանդակություն:

Սակայն ես գիտեի, որ «բարի» ոստիկանապետը չի բավականանալու իմ երաշխավորությամբ և հացկերույթին ներկա է լինելու նրա գաղտնի աժանը: Այս իսկ պատճառով ես նախքան հացկերույթը խոսողներին զգուշացրի ու գրավոր ճառերը մեկ-մեկ կարդացի: Բարեբախտաբար ուղերձների և ճառախոսների թիվը մեծ չէր: Հարյուրավոր բազմության ուշադրությունն ավելի հացի սեղանով էր գրավված, քան ճառերով:

Ինձ մոտեցավ բարձրագույն տեխնոլոգիական դպրոցի համազգեստով բավականին բարձրահասակ, շատ համակրելի և նույնիսկ գեղեցիկ և խոհուն դեմքով մի մոտ 20 տարեկան երիտասարդ, մի քիչ գունատ և հուզված:

— Թույլ տվեք ինձ ևս շնորհավորելու, — ասաց նա մաքուր ու գրական բարբառով:

— Պիտի խոսե՞ք:

— Ոչ, պիտի կարդամ, ահա այս թուղթը:

— Թույլ տվեք ինձ աչքի անցկացնելու:

— Առեք:

Ես կարդացի թուղթը: Դա շնորհավորում չէր, այլ մի սոսկալի հարձակողական և անվերապահ քննադատություն ոչ Աղայանցի գործերի, այլ Ռուսիայում այդ ժամանակ տիրող քաղաքական կացության: Երիտասարդը պնդում էր, որ ամեն մի գրական գործունեություն դատապարտված է ամլության ներկա պայմաններում: Ոչ մի գրականություն չի կարող զարգանալ և առաջադիմել և ոչ մի գրող չի կարող ազատ արտադրել, քանի որ ցարական ռեժիմը կա:

Հետևաբար յուրաքանչյուր քաղաքացու ժամանակակից միակ բարոյական պարտականությունն է «նախքան հոբելյաններ տոնելը», ջանալ այդ ռեժիմը տապալելու:

— Սիրելիս, — ասացի երիտասարդին, վերադարձնելով նրան իր թուղթը,— դժբախտաբար ես չեմ կարող թույլ տալ, որ դուք կարդաք այդ թուղթը:

— Ինչո՞ւ, — հարցրեց նա պարզամտությամբ:

— Նայեք այն կողմը: Տեսնո՞ւմ եք այն շեկ մորուքավոր պարոնին, նա ոստիկանության գաղտնի գործակալն է:

— Է՛հ, ի՞նչ անենք: Նա ռուս է, իսկ իմ գրածը հայերեն է:

— Այո՛, ռուս է, բայց հայերեն գիտե: Ինձ խուզարկելու ժամանակ նա էր կարդում իմ ստացած հայերեն նամակներն ու թարգմանում: Եթե ես թույլ տամ կարդալու բովանդակությունը Ձեր թղթի, տելեֆոնով իսկույն կհաղորդի ուր հարկն է, և հանդեսը կխափանվի:

— Թող խափանվի, մի՞թե շատ կցավենք:

— Կցավեմ ծերունու համար, ինչո՞ւ այս համեստ տոնախմբությունը չքացնել և հոբելյարին դառնացնել:

Երիտասարդը թուղթը դրեց իր գրպանը, հեռացավ տխուր ու գունատ և նստեց հացի սեղանի հեռավոր անկյունում: Ես զգացի, որ չափազանց վշտացրի նրան, բայց ի՞նչ կարող էի անել: Գիտեի, որ նրա գրվածքի մեջ կա մի սուր և դառը ճշմարտություն, արտահայտված ոչ նրբորեն, բայց վերին աստիճանի անկեղծ: Որքան հիշում եմ, վշտացյալ ուսանողը նույնիսկ հացին չմասնակցեց:

Այդ օրից անցան տասնյակ տարիներ: Սակայն ուսանողի դեմքը չեմ մոռանում: Նրա խելացի, գունատ և մռայլ դեմքը տպավորվել էր իմ մեջ: Ես շարունակ զգում էի խղճի մի տեսակ խայթ ամեն անգամ, երբ հիշում էի այդ հոգեշունչ կերպարանքը:

Ինչո՞ւ հավատացյալին արգելեցի իր հավատը քարոզելու, թող հանդեսը խափանվեր, թող իսկ ձերբակալվեր, միայն թե ճշմարտությունն արտասանվեր այդ բերանից:

Ռուսական հեղափոխության երկրորդ տարին էր: Գնացել էի Բաքու հեռավոր ճանապարհորդությունս սկսելուց առաջ մնաք բարով ասելու իմ քույրերին: Ադրբեջանի կարմրարև, «անկախության» օրերն էին: Դրությունը վերին աստիճանի խախուտ էր, օր-օրի վրա սպասվում էր հանրապետության տապալումը: Մեծամասնականները սպառնում էին Կովկասին: Արդեն Բաքվի մեջ սկսվել էր նրանց շարժումը:

Մի անուն էր հնչում հրապարակի վրա ամենից բարձր, ամենից զորեղ: Ոմանք անիծում էին այդ անունը, ոմանք օրհնում, բայց հակառակորդներն անգամ չէին հանդգնում մի ամենաչնչին ստվեր ձգելու այդ անվան վրա:

— Ֆանատիկոս է, կատարյալ հավատացյալ, մոլորված է, բայց բարոյապես մաքուր, անարատ և հարմար, — ասում էին ամենքը միաբերան:

Գործերս վերջացնելով, ուղևորվեցի Թիֆլիս: Մտնելով երկաթուղու կայարանը, հանկարծ ակամա կանգ առա մի բարձրահասակ, տղամարդի առջև: Նա գալիս էր դեմուդեմ, գլուխը բարձր պահած, խրոխտ, համարձակ քայլերով: Մոտովս անցնելով, նա ինձ վրա ձգեց մի խորը հանդիմանական հայացք: Դա այն ուսանողն էր, որին ես թույլ չէի տվել թուղթը կարդալու Աղայանցի հոբելյանին:

Նա է, ես ճանաչում եմ...

Դա Ստեփան Շահումյանն էր:

Այդ օրից հետո ես այլևս չհանդիպեցի այդ մարդուն: